ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2012

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքների

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (Նախարարության) 2012 թվականի գործունեության ծրագրային հիմքը կազմել են ՀՀ նախագահի նախընտրական ծրագիրը, ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները, ՀՀ կառավարության կողմից հաստատված առանձին ոլորտների զարգացման ծրագրերն ու հայեցակարգերը:

ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 12-ի թիվ 77-Ն և օգոստոսի 9-ի թիվ 1055-Ն որոշումներով սահմանված՝ ՀՀ կառավարության միջոցառումների ծրագրերով նախատեսված Նախարարության պատասխանատվությամբ 6 կետերը կատարվել են սահմանված ժամկետներում:

Նշված որոշումներով ամրագրված՝ հաշվետու տարվա համար նախարարության գործունեության առաջնահերթությունների օրակարգը ներառել է երեքական գերակա խնդիր, որոնց իրագործման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների հաշվետվությունը ներկայացվում է ստորև:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական քաղաքականության համակարգված իրականացումն ապահովելու նպատակով փետրվարին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհուրդ (ԱԽ):

ԱԽ ապրիլի 20-ի նիստում կոնյակագործության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարությունների իրականացման վերաբերյալ ստորագրվել են հուշագրեր՝ ՀՀ կառավարության և ոլորտային միությունների, ընկերությունների, ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական ինստիտուտների միջև:

Ճշգրիտ ճարտարագիտության, կոնյակագործություն և դեղագործություն ու բիոտեխնոլոգիաների, թեթև արդյունաբերության, ինչպես նաև ոսկեգործության, ժամագործության և ադամանդագործության ոլորտների համար ձևավորվել են ոլորտային խորհուրդներ, դրանց քարտուղարություններ՝ պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավմամբ:

«Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-15թթ. գործողությունների ծրագիրը» և «Կոնյակագործության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը» հուլիսի 24-ին, իսկ «Գինեգործության 2012-2020թթ. ոլորտային ռազմավարությունը» «Գինեգործության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը», «Ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային ռազմավարության իրականացումն ապահովող 2012-15թթ. գործողությունների ծրագիրը», «Ոսկեգործության, ժամագործության և ադամանդագործության ոլորտային ռազմավարությունները և 2012-15թթ. ոլորտային ռազմավարությունների իրականացումն ապահովող գործողությունների ծրագիրը»՝ նոյեմբերի 27-ին հավանության են արժանացել ԱԽ նիստում: Քննարկման է դրված «Թեթև արդյունաբերության 2013-2020թթ. ոլորտային ռազմավարության» նախագծի նախնական տարբերակը:

Նոյեմբերին ստորագրվել են «ՀՀ կառավարության և ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի ներկայացուցիչների միջև ճշգրիտ ճարտարագիտության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ», «ՀՀ կառավարության և գինեգործության ոլորտի ներկայացուցիչների միջև գինեգործության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ» հուշագրերը:

Ոլորտային խորհրդի հաստատմանն են ներկայացվել 2012-2015թթ. դեղագործության և բիոտեխնոլոգիաների գործողությունների ծրագրի գնահատման և մոնիթորինգի ցուցանիշները:

Նոյեմբերի 8-ին ՀՀ կառավարությունը ընդունեց Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը Արդյունաբերական հիմնադրամ վերանվանելու մասին որոշումը, համաձայն որի ընդլայնվել են

Հիմնադրամի խնդիրներն ու գործառույթները՝ հանդիսանալով ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի կատարման գլխավոր օպերատոր:

«Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2013 թվականի ծրագրի» համար հատկացվել է 300 մլն դրամ:

300 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրի շրջանակներում ԱԱՀ-ի հետաձգում. ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել 8 ընկերությունների ներդրումային ծրագրեր, որոնց ընդհանուր ներդրումների ծավալը կազմում է մոտ 17.5 մլրդ ՀՀ դրամ: Նշված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է ստեղծել մոտ 340 նոր աշխատատեղ: 2009թ.-ից ի վեր թույլտվություն են ստացել 25 ընկերությունների 29 ներդրումային ծրագրեր, որոնց կանխատեսվող ներդրումների ծավալը կկազմի մոտ 102 մլրդ ՀՀ դրամ: Արդյունքում՝ նշված ծրագրերի շրջանակում կստեղծվի մոտ 2400 նոր աշխատատեղ, որից 1800-ը արդեն ստեղծվել է:

«**Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգում.** Նախարարության առաջարկությամբ ՀՀ կառավարության կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների ժամկետների երկարաձգման թույլտվություն են ստացել թվով 6 ընկերությունների 7 ծրագրեր: Ընդհանուր առմամբ հետաձգվել են ավելի քան 1.4 մլրդ ՀՀ դրամ մաքսային արժեքով ապրանքների մաքսային վճարներ և ԱԱՀ վճարումներ:

ՀՀ և ՌԴ կառավարությունների քննարկումների արդյունքում հուլիսի 30-ին (ուժի մեջ՝ սեպտեմբերի 3-ից) ՌԴ կառավարության կողմից համապատասխան փոփոխությամբ Վերին Լարսի մաքսային անցակետը ներառվել է ՌԴ ակցիզային ապրանքատեսակների ներմուծման կետերի ցանկում:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

Նախարարության համակարգմամբ գործարար միջավայրի բարելավման բարեփոխումների արդյունքում ՀԲ ՄՖԿ հրապարակած «Գործարարությամբ զբաղվելը 2013» զեկույցի տվյալներով Հայաստանը վարկանիշը բարելավել է 18 կետով՝ զբաղեցնելով 32-րդ տեղը 185 երկրների մեջ:

Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քայլերը ներառեցին հետևյալ ուղղությունները.

Բիզնես սկսելու գործընթացի պարզեցում և բարելավում. Կազմակերպությունների պետական գրանցումը և անհատ ձեռնարկատերերի հաշվառումը հուլիսի 25-ից կատարվում է անվճար: Ներդրվել է իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման լիարժեք էլեկտրոնային համակարգը: Սահմանվել է, որ գրանցման ժամանակ Ռեգիստրը ՀՎՀՀ-ի և ֆիրմային անվան հետ տրամադրում է նաև սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համարը: Թվով 60 օրենքներում և ՀՀ կառավարության 84 որոշումներում վերացվել է տնտեսվարողների կողմից ներկայացվող փաստաթղթերի կնքված լինելու պահանջը:

Հարկային ոլորտի բարելավում. ՀՀ կառավարության որոշմամբ ՏՏ ոլորտի ընկերությունների համար շահութահարկի բազան կնվազեցվի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ծախսերի չափով: Երևանի քաղաքապետարանում ներդրվել է գույքի և հողի հարկերի վճարման առցանց համակարգ: ՀՀ կառավարության կողմից ուժը կորցրած է ճանաչվել հասույթի և առաքման գրքերի վարման պահանջը սահմանող կարգը: Կրճատվել է գրքերի վարման կարգի պահանջների կատարման նկատմամբ իրականացվող հսկողությունը: Շարունակվում են միջոցառումները մինչև տարեկան 58.35 մլն. շրջանառություն ունեցող տնտեսվարողների կողմից էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման խրախուսման նպատակով: ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ առևտրի և ծառայությունների ոլորտի կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից վիճակագրական տեղեկությունները հավաքագրվում են եռամսյակային պարբերականությամբ՝ նախկին ամսականի փոխարեն:

Մաքսային ոլորտի բարելավում. Պարզեցվել է կազմակերպությունների և անհատ

ձեռնարկատերերի՝ ՀՀ մաքսատներում՝ որպես արտաքին տնտեսական գործունեության մասնակից գրանցվելու ընթացակարգը, մասնավորապես՝ վերացվել են մի շարք փաստաթղթերի ներկայացման պահանջը:

Շինարարական թույլտվությունների ստացման պարզեցում. Երևանի քաղաքապետարանի կայքի միջոցով հնարավոր է ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Կախված օբյեկտի ռիսկայնության աստիճանից սահմանվել են նաև դրանց տրամադրման ժամկետները: Համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների համակարգի ներդրման նպատակով ընդունվել է «ՀՀ համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգման հայեցակարգին և համակարգի ներդրման ուղղություններից բխող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N43 արձանագրային որոշումը, որի համաձայն ՀՀ համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների համակարգը ամբողջությամբ կներդրվի մինչև 2015 թվականը:

Էլեկտրականության միացման գործընթացների և ժամկետների կրճատում և պարզեցում. Էլեկտրականության միացման գործընթացները հասցվել են 3-ի՝ նախկին 6-ի փոխարեն: Կրճատվել են սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետները, մասնավորապես 0.4 ԿՎ ցանցերին միանալու դեպքում դիմում ներկայացնելու պահից մինչև մատակարարման պայմանագիր կնքելու ժամկետը չի կարող գերազանցել 135 օրը, նախկին 270 օրվա փոխարեն: Վերանայվել և կրճատվել են Էլեկտրականության միացման վճարները:

Սեփականության գրանցման պարզեցում. Նախկինում չափագրված գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը կատարվում է առանց չափագրման աշխատանքներ կատարելու և դրա դիմաց վճար գանձելու: Հունվարի 1-ից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման համար դիմումները կարող են ներկայացվել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ ցանկացած սպասարկման գրասենյակ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: ՀՀ կառավարության կողմից ընդունվել են նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևեր: Ստեղծվել է անշարժ և շարժական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման դիմումները և դիմումներին կից փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով առցանց ներկայացնելու հնարավորություն: ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի կայքում նաև տրամադրվում է առցանց խորհրդատվություն: Ապրիլից ներդրվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական և տեղական տուրքերի, պետական կամ ՏԻՄ կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը կամ վարչական տուգանքները վճարելու էլեկտրոնային համակարգ:

Վարկերի ստացման գործընթացի պարզեցում. ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ տարածքում գործող վարկային բյուրոներին տրամադրվում են տվյալներ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության տեղեկատվական համակարգերից, սոցիալական ապահովության քարտերի տեղեկատվական բազայից և պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում ընդգրկված անձանց տվյալների անհատական հաշվառման բազայից, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական համակարգից:

Ներդրողների պաշտպանվածություն. Շահագրգռվածության առկայությամբ իրականացված գործարքների բացահայտման մեխանիզմները կատարելագործելու և տնօրենների պատասխանատվությունն ընդլայնելու նպատակով այսուհետ գործում են շահագրգռվածության առկայությամբ գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ լինելու վերաբերյալ բացահայտման, շահագրգռվածության առկայությամբ ընկերության տարեկան հաշվետվության մեջ ցանկացած գործարքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման, գործարքում շահագրգիռ ճանաչված անձի կողմից օրենքի խախտմամբ ընկերությանը հասցված վնասի վերադարձի, ընկերությանը վերապահված լիազորությունների վերազանցման արդյունքում ստացված շահույթի փոխհատուցման պահանջները:

Կազմակերպությունների լուծարման և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից

հանելու գործընթացի պարզեցում. ՀՀ ԱԺ-ում են գտնվում «Սնանկության մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ուղված են կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու գործընթացը պարզեցնելուն, մասնավորապես՝ պարտապանի գույքի օտարման կապակցությամբ կատարվող գործողությունների առավել կարճ ժամկետներ, պարտապանի անվամբ բացված սնանկության հատուկ հաշվում եղած դրամական միջոցների բանկի կողմից օգտագործման և դրա դիմաց տոկոսներ վճարելու վերաբերյալ դրույթներ:

ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Տեսչական բարեփոխումների շրջանակներում շարունակվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքից բխող միջոցառումների ապահովումը: ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ հաստատվել են.

- ստուգող մարմինների կողմից հրապարակման ենթակա տարեկան հաշվետվության և ստուգումների տարեկան ծրագրի օրինակելի ձևերը, տարեկան ծրագրի լրացման ուղեցույցը, դրանց միջև տվյալների փոխանակման կարգը,
- այն կազմակերպությունների ցանկը, որոնցում բացառության կարգով ստուգումներ կարող են իրականացվել 6 ամիսը մեկ անգամ,
- ՀՀ ՖՆ լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման պայմանների ու պահանջների կատարման ստուգաթերթերը,
- ՀՀ ԱՆ Հիգիենիկ և հակահամաճարակային պետական տեսչության, ՀՀ ԲՆ Բնապահպանական պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունները, ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի պետական տեսչության, ՀՀ ԷԲՊՆ Ընդերքի պետական տեսչության, ՀՀ ԿՊՆ Տրանսպորտի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունները և ստուգաթերթը,

Մշակվել են նաև Շուկայի վերահսկողության պետական տեսչության, Քաղաքաշինական պետական տեսչության, Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և Օրինականության վերահսկողության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանություններն ու ստուգաթերթերը:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ (ՓՄՁ)

ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2012թ. ծրագրի շրջանակում տեխնիկական և ֆինանսական աջակցության ուղղություններով բավարարվել է 8432 աջակցության հայտ: Աջակցություն ստացածների 6.8%-ը գործում են Երևանում, իսկ 93.2%-ը՝ մարզերում: 27 ՓՄՁ սուբյեկտի, 148.0 մլն դրամի չափով տրամադրվել են վարկային երաշխավորություններ՝ ապահովելով 252.5 մլն դրամի վարկային փաթեթ: 209 սկսնակ գործարար ստացել են աջակցություն, որից 92-ը՝ ֆինանսական: Ստացված վարկի ընդհանուր գումարը կազմել է 96.6 մլն դրամ, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ երաշխավորությունը՝ 98.1 մլն դրամ: «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից 33 իրավաբանական անձանց և 4 անհատ ձեռնարկատերերի տրամադրվել է 2.937 մլրդ ՀՀ դրամի վարկ:

ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական, խորհրդատվական և տեղեկատվական աջակցության շրջանակներում Հաշվապահական կենտրոնի հետ համատեղ ՀՀ մարզերում կազմակերպվել է ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ 12 (մասնակցել են 276 ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ) և ՀՀ աշխատանքային օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ 8 (մասնակցել են ՓՄՁ սուբյեկտների 228 ներկայացուցիչներ) անվճար խորհրդատվական/ուսուցողական սեմինար:

Հայաստանում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) հաղորդակցման կենտրոնի գործունեության ապահովման շրջանակներում ՁԵՑ-ի գործունեությունը և ծառայությունները ներկայացվել են մի շարք միջոցառումների ընթացքում, մասնավորապես՝ «Գործարար հայուհի» ցուցահանդես-էքսպո, Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառում, Եվրոպայի օրվան նվիրված միջոցառում Երևանում, «Դիջիթեք-2012» տեխնոլոգիական միջազգային ցուցահանդես, հայ գործարարների և Հնդկաստանի դեսպանատան ներկայացուցիչների միջև կազմակերպված հանդիպում, «Երկրները մեկ հարկի տակ» փառատոն:

Համագործակցության նոր հուշագրեր են ստորագրվել ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացում և շուկայի մրցունակություն» USAID/EDMC ծրագրի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) և Հեյֆեր (Heifer) կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ:

ԵՄ Արևելյան գործընկերության համապատասխան պլատֆորմի ներքո գործող «Տնտեսական քաղաքականության իրականացում» ծրագրի շրջանակներում գնահատված «ՓՄՁ քաղաքականության ինդեքսով» Հայաստանն առաջատարների շարքում է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել 90 երկկողմ և 20 բազմակողմ համաձայնագրերի կնքման, փորձաքննության և վավերացման ուղղությամբ:

Ի կատարումն 2011թ. հուլիսի 8-ին Ռոստովում կայացած ՌԴ և ՀՀ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի Արձանագրության 3.1 կետի՝ շարունակվել են աշխատանքները ՀՀ և ՌԴ մինչև 2020թ. երկարատև տնտեսական համագործակցության Ծրագրի մշակման ուղղությամբ: Մասնավորապես, ամփոփվել են Ծրագրի ձևավորման ուղղությամբ ՀՀ գործադիր իշխանության շահագրգիռ մարմինների կողմից ստացված առաջարկությունները, որոնք քննարկվել են հայ-ռուսական աշխատանքային խմբի՝ ս.թ. հուլիսի 30-31-ին Երևանում կայացած նիստի ընթացքում: Շահագրգիռ մարմինների հետ ներպետական համաձայնեցումից հետո Ծրագրի փոխհամաձայնեցված տարբերակը հաստատվել է 2012թ. հոկտեմբերի 12-ին Երևանում՝ ՌԴ և ՀՀ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 14-րդ նիստի շրջանակներում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2012թ. հունվարին Եվրոպական հանձնաժողովին է ներկայացվել համապարփակ Ձեկույց՝ ՀՀ-ԵՄ ԽՀԱԱԳ ստեղծման բանակցությունների մեկնարկն ապահովելու նպատակով ՀՀ կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ: Փետրվարի 17-ին ԵՀ բանակցությունների մեկնարկի վերաբերյալ կայացվել է դրական որոշում, որի մասին հայտարարվել է մարտի 5-7-ը ՀՀ Նախագահի՝ Բրյուսել կատարած այցի ընթացքում:

Մայիսի 3-ին տեղի ունեցավ բանակցությունների մեկնարկային զրո փուլը, որի ընթացքում քննարկվեցին բանակցային գործընթացին առնչվող «Ընդհանուր փոխհամաձայնություն» և «Բանակցությունների ընդհանուր մոտեցումներ» փաստաթղթերը: Ձևավորվեցին 14 ուղությունների բանակցային խմբերը:

Հունիսի 19-20-ը կայացավ բանակցությունների 1-ին փուլը, որի ընթացքում համաձայնեցվեց բանակցային բոլոր ուղղությունների «Հիմնախնդիրների փաստաթղթերի» փաթեթը:

Հոկտեմբերի 2-4-ը կայացավ բանակցությունների 2-րդ փուլը, որի ընթացքում բանակցվեցին բանակցային 10 ուղղություններով ԽՀԱԱԳ տեքստերի նախագծերը: Մրցակցություն և Առևտրի պաշտպանական միջոցներ ուղղություններով տեքստերը համաձայնեցվել են, իսկ մյուս 8 ուղղություններով գրանցվել է զգալի առաջընթաց:

Նոյեմբերի 19-ին իրականացվեց մաքսատուրքի դրույքաչափերի վերացման Հայաստանի և Եվրամիության առաջարկների փոխանակումը:

Դեկտեմբերի 3-6-ը կայացավ բանակցությունների 3-րդ փուլը, որի ընթացքում շարունակվեցին

բանակցությունները նախորդ 8 ու ևս 4 նոր ուղղություններով տեքստերի նախագծերը, ինչպես նաև մաքսատուրքի դրույքաչափերի վերացման փոխադարձ առաջարկները:

ՀՀ-ի և ԵՄ-ի միջև ստորագրվել, այնուհետև ՀՀ նախագահի կողմից հաստատվել է երկու ֆինանսավորման համաձայնագիր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 43,1 մլն եվրո՝ «Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին, փուլ II» (24 մլն եվրո) և «Շրջանակային ծրագիր՝ ուղղված ԵՄ-Հայաստան համաձայնագրերի իրականացմանը» (19.1 մլն եվրո):

ԵՄ հրապարակած Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) Գործողությունների ծրագրի 2011թ. «Առաջընթացի զեկույցի» համաձայն Նախարարության իրականացրած միջոցառումները դրական են գնահատվել:

Մեկնարկել է 6, ավարտվել է 1, իսկ այժմ իրականացման ընթացքում է 9 Թվինինգ ծրագիր: Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի հայտների ընդունման առաջին փուլի ամփոփման արդյունքում Հայաստանը ներգրավվել էր հաղթող ծրագրերից 3-ում, որոնք արդեն մեկնարկել են: Հայտերի ընդունման երկրորդ փուլից հետո Հայաստանը ներգրավվել է 7 ծրագրում: Կայացել են 33 Թայեքս միջոցառում՝ տարբեր պետական մարմինների ներգրավվմամբ:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամբողջությամբ ձևավորվել է ազատ տնտեսական գոտիների գործունեությունը կարգավորող իրավական դաշտը:

«ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ստեղծվել է ազատ տնտեսական գոտի, որի կազմակերպիչ է ընտրվել «ՍԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն (պայմանագիրը կնքվել է ս.թ. ապրիլի 26-ին): Հավանություն է տրվել ԱՏԳ-ում որպես շահագործող գործունեություն ծավալելու համար «R&D Arts» կազմակերպության գործարար ծրագրին:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Հայաստանում արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպության ստեղծման միջոցառումների ցանկը», ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է «Հայաստանում արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպության» հիմնադրման աշխատանքների համակարգման խորհուրդ:

GIZ-ի հետ համատեղ՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ մեկնարկել է Հայաստանի ներդրումների խրախուսման և ներգրավման քաղաքականության վերանայման ծրագիրը:

Մշակվել է Օտարերկրյա պետության հետ ներդրումների փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի (BIT) նոր մոդել: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության և օտարերկրյա կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի օրինակելի ձև:

Կազմակերպվել են մի շարք համաժողովներ և օտարերկրյա ներդրողների հետ հանդիպումներ, մասնավորապես՝ «Սիտրոնիկս Արմենիա» ՓԲԸ-ի, ավստրիացի, ֆրանսիացի, իտալացի, շվեյցարացի, ինչպես նաև պարսկահայ, սիրիահայ և այլ գործարարների և կանադական «R&D Arts» ընկերության հետ՝ ԱՏԳ-ում որպես շահագործող գործունեություն ծավալելու նպատակով, տարբեր երկրների դեսպանությունների տնտեսական գծով պատասխանատուների և միջազգային կազմակերպությունների աշխատակիցների հետ՝ հնարավոր ներդրումային համագործակցություն ծավալելու նպատակով:

ԱՄՆ ՄԶԳ EDMC-ի հետ համատեղ ստեղծվել և հրապարակվել է «Հայաստան. ներդրումային ուղեցույց 2013» ձեռնարկը՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով: KPMG-ի հետ համատեղ ստեղծվել է «Ձեր բիզնեսը Հայաստանում» ձեռնարկը: Ստեղծվել են նաև ՀՀ ներդրումային միջավայրի և առավելությունների, ԱՏԳ-ների վերաբերյալ շնորհանդեսներ, ինչպես նաև ներդրումային ծրագրի անձնագիր, որոնք ներկայացվել են տարբեր համաժողովներին:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՇՈՒԿԱՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում ստորագրվել է «Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության հիմնական ուղղությունների մասին 2000թ հունվարի 25-ի Համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին» Արձանագրությունը, որը նախատեսում է ԱՊՀ անդամ պետություններում սպառողների իրավունքների պաշտպանության միասնական համակարգի ձևավորում:

Իրականացվել է 2011 թվականին ստորագրված «Ազատ առևտրի գոտու մասին» ԱՊՀ անդամ երկրների Պայմանագիրն ուժի մեջ մտնելու հետ կապված ներպետական ընթացակարգերի ապահովման գործընթացը: Սեպտեմբերի 17-ին Պայմանգիրը վավերացվել է ՀՀ ԱԺ կողմից և հոկտեմբերի 17-ին մտել ուժի մեջ:

Մշակվել և ՀՀ ԱԺ քննարկմանն է ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը՝ նպատակ ունենալով սահմանել խոշոր առևտրի օբյեկտների տեղակայման քաղաքաշինական չափորոշիչները, կանխել տնտեսական մրցակցության անհավասար պայմանների դրսևորումները, ապահովել փոքր և միջին առևտրային օբյեկտների շահերի պաշտպանությունը:

Մշակվել և ընդունվել են 2011թ ընդունված «Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես՝ օդի ներմուծողների լիցենզավորման կարգը:

Մայիսի 24-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների բնագավառի կարգավորման և զարգացման մասին» Հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը: Նախատեսվում է Հայաստանում ներդնել միջազգային, մասնավորապես՝ ԵՄ ստանդարտներին համապատասխան ոսկերչական ապրանքների արտադրության հանդեպ պահանջներ, ինչը թույլ կտա հայ ոսկերիչներին գործել ավելի նպաստավոր պայմաններում և կայուն դիրքեր գրավել արտաքին շուկաներում:

ՀՀ կառավարության կողմից սահմանվել են վերամշակման նպատակով բնական ալմաստներ Հայաստան ներմուծման և Հայաստանից արտահանման ընթացակարգերը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՏ) ԵՎ ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐ

Գյումրու տեխնոպարկի հիմնական շենքի հիմնանորոգման նպատակով փետրվարին հայտարարված շինարարական կազմակերպության ընտրության մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից մայիսին աշխատանքները մեկնարկել են:

ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Դ-Լինկ» ընկերության ներդրումային ծրագիրը, որի համաձայն նախատեսվում է Գյումրիում ստեղծել հետազոտությունների և թեստավորման կենտրոն: Ծրագրի արժեքը 8.5 մլն ԱՄՆ դոլար է, որից 1 մլն ԱՄՆ դոլարը կտրամադրվի թեստավորման լաբորատորիայի հիմնադրմանը:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործարկման հաջողված փորձի հիման վրա նախատեսվում է տեխնոլոգիական կենտրոն ստեղծել նաև ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: Արդեն իսկ ընտրվել է կենտրոնի տեղակայման տարածքը, ինչպես նաև բանակցություններ են վարվել Համաշխարհային բանկի հետ՝ «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության» ծրագրի շրջանակում կենտրոնի վերանորոգումն իրականացնելու ուղղությամբ:

Մեկնարկել է «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի հիմնական փուլը, որում ներգրավված են ավելի մեծ թվով վաճառակետեր, մասնակից բանկեր և արտադրողներ (HP, DELL և ASUS Technology PTE Ltd):

Հունիսի 15-16-ը կայացավ «Smart Country- թվային լուծումներ նորարար տնտեսության համար» խորագիրը կրող 5-րդ ամենամյա «Դիջիթեք Բիզնես ֆորումը», որի ընթացքում իրենց տեխնոլոգիական նորագույն լուծումներն ու ինովացիոն մոտեցումները ներկայացրեցին շուրջ 59

կազմակերպություններ, այդ թվում՝ 38 տեղական և 21 արտասահմանյան:

Հոկտեմբերի 5-7-ը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի նորաբաց «Երևան Էքսպո» համալիրում տեղի ունեցավ «ԴիջիԹեք 2012» ցուցահանդեսը, որին մասնակցեցին տեղական և օտարերկրյա 120 կազմակերպություններ՝ անցած տարվա 113-ի համեմատ: Ցուցահանդեսն ունեցավ շուրջ 24000 այցելու՝ նախորդ տարվա 18000-ի համեմատ:

Դեկտեմբերի 10-11-ին ԱՄՆ-ի Սիլիկոնյան հոտվում, Սթենֆորդի համալսարանում տեղի ունեցավ «ԱրմԹեք» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների հինգերորդ գլոբալ գործարար համաժողովը: Համաժողովը հնարավորություն ընձեռեց ողջ աշխարհից ժամանած ավելի քան 200 մասնակիցներին քննարկել ՀՀ ՏՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտի ռազմավարական խնդիրները, գնահատել զարգացման միտումները և ծանոթանալ ոլորտի վերջին նորամուծություններին: Համաժողովի շրջանակում ՀՀ կառավարության և «Ինթել» ընկերության միջև կնքվեց Հայաստանում գիտահետազոտական կենտրոն հիմնելու մասին փոխըմբռնման հուշագիրը, իսկ «Կորպորասիոն Ամերիկա» ընկերության և ՀՀ կառավարության միջև ստորագրվեց Հայաստանում չիպերի գործարան հիմնելու մասին հուշագիրը:

Դեկտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներկայացուցչական գրասենյակի բացումը ԱՄՆ Սիլիկոնային հովտում:

Դեկտեմբերին ստորագրվեց Հայաստանում առաջին վենչուրային հիմնադրամի ստեղծման մասին փոխըմբռնման հուշագիրը:

Հայաստանը 2011թ. հուլիսից երկամյա ժամկետով ստանձնել է Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպության «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների» աշխատանքային խմբի համակարգող երկրի գործառնությունը, որի շրջանակում հոկտեմբերի 5-ից 7-ը Երևանում կայացավ ՍԾՏՀ կազմակերպության տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հարցերի աշխատանքային խմբի հերթական նիստը:

Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի հիմնման ծրագրի շրջանակում ապրիլի 2-ին ՀՀ վարչապետի, ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ առողջապահության նախարարների մասնակցությամբ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի և ամերիկյան «Գլոբալ Մեդիքլ Սոլյուշնս ԷլԹիԴի» ընկերության միջև ստորագրվել է միջուկային բժշկության բնագավառում համագործակցության համաձայնագիր:

Սեպտեմբերին մեկնարկել են Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի շենքի շինարարական աշխատանքները: Կենտրոնի շինարարության ավարտից հետո այնտեղ կտեղադրվի բելգիական ընկերությունից ձեռքբերվելիք ռադիոիզոտոպների արտադրության համալիրը՝ բաղկացած «Ցիկլոն-18» 18 ՄԷՎ հզորությամբ ցիկլոտրոնից և ինտեգրված բարձր տեխնոլոգիական սարքավորումներից:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

2012թ. հունվար-սեպտեմբերին հանրապետություն են ժամանել թվով 603 074 զբոսաշրջիկներ՝ 2011թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 9.4%-ով: 2012թ. հունվար-սեպտեմբերին զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 608 175 մարդ կամ 2011թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 11.4%:

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2012թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 425 026 զբոսաշրջիկներ, ինչը 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 2.6 %-ով:

Ըստ սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության ցանկում ընգրկված զբոսաշրջային օպերատորների կողմից ներկայացրած հաշվետվության՝ 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կնքվել է 10772 պայմանագիր: Սոցիալական փաթեթի շրջանակներում զբոսաշրջային օպերատորները համագործակցել են ՀՀ և Լեռնային Ղարաբաղի տարածքում

գործող ավելի քան 50 հյուրանոցների, հանգստյան տների և առողջարանների հետ:

Նկատելի է ենթակառուցվածքների զարգացում, նոր հյուրանոցային տնտեսության օբյեկտների նկատմամբ պահանջարկի զգալի աճ և հյուրանոցաշինության ուղղությամբ ներդրումային ակտիվություն: Մասնավորապես, շահագործման է հանձնվել 6 հյուրանոց, որից 4-ը Երևանում, 2-ը Ծաղկաձորում: 2013 թվականին նախատեսվում է շահագործման հանձնել ևս 6-ը:

Հոկտեմբերի 18-19 Երևանում կայացավ «Համամարդկային արժեքները և մշակութային բազմազանությունը 21-րդ դարում. Զբոսաշրջության ներդրումը» խորագրով միջազգային համաժողովը, որին մասնակցում էին ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղարը, ՄԱԿ ԶՀԿ անդամ երկրների զբոսաշրջության պատասխանատու պաշտոնյաներ, Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի և կրթական հաստատությունների ներկայացուցիչներ (շուրջ 150 մասնակից): Համաժողովի արդյունքում զբոսաշրջության ոլորտի մասնավոր հատվածի հինգ ներկայացուցիչներ ստորագրեցին «Զբոսաշրջության էթիկայի համաշխարհային արժեքների նկատմամբ պարտավորությունների ստանձնում» փաստաթուղթը (UNWTO Global Code of Ethics)՝ խրախուսելով պատասխանատու զբոսաշրջության զարգացումը և համամարդկային արժեքների հանդեպ հարգանքը: Համաժողովի ավարտին ընդունվեց Երևանյան հռչակագիր՝ ուղղված համամարդկային արժեքների, միջմշակութային երկխոսության մշակութային բազմազանության ճանաչմանն ու կարևորմանը:

Համաժողովի օրերին Երևանում կայացավ զբոսաշրջության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների հերթական խորհրդի նիստը: Նիստի օրակարգում ընդգրկված հարցերն առնչվում էին ԱՊՀ անդամ-պետությունների միջազգային զբոսաշրջային համագործակցության ռազմավարության նախագծին, զբոսաշրջության ոլորտում պետական և մասնավոր հատվածի գործընկերության զարգացմանը, տրանսպորտի ոլորտում համագործակցությանը և այլ հարցերին:

ՀՀ Վարչապետ Տ.Սարգսյանի և ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղար Թալեբ Ռիֆաիի հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում Նախարարությունը աշխատանքային քննարկումներ է սկսել ՄԱԿ ԶՀԿ հետ և վերջինիս ու ՀՀ արտաքին գործերի նախարարության աջակցությամբ համապատասխան բանակցություններ է վարում Իսպանիայի զբոսաշրջության պետական լիազոր մարմնի հետ՝ իսպանական առաջատար հյուրանոցային ցանցերի հետ կապեր հաստատելու և համագործակցություն սկսելու ուղղությամբ:

Չինաստանի և Հնդկաստանի քաղաքացիների համար վերացվել է մուտքի վիզա ստանալու համար հրավեր ներկայացնելու պահանջը:

Չինական կողմի հետ մեկնարկել է «Երաշխավորված զբոսաշրջային երկիր» կարգավիճակի (ADS) ձեռքբերման գործընթացը: Համաձայն ՉԺՀ օրենսդրության՝ Չինաստանից զբոսաշրջային խմբերով կազմակերպված ուղևորություններ հնարավոր է իրականացնել դեպի այն երկրներ, որոնք ՉԺՀ կողմից ստացել են «Երաշխավորված զբոսաշրջային երկիր» կարգավիճակ (ADS):

ՀՀ ԱԺ կողմից 1-ին ընթերցմամբ ընդունվել է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի նպատակն է 5 աստղանի որակավորման կարգը գերազանցող “5 աստղանի Դելյուքս” որակավորման կարգի ներդրումը և դրանով առավել շքեղ հյուրանոցների տարբերակումը, ինչպես նաև որակավորման կարգի նշանների օգտագործման և հյուրանոցային տնտեսության օբյեկտների ներկայացման նկատմամբ պահանջների հստակեցումը՝ համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերության զարգացման ներկայիս պայմաններին համապատասխան:

Դեկտեմբերին Նախարարության, ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Ազգային մրցունակության հիմնադրամի, USAID EDMC ծրագրի և GIZ-ի միջև ստորագրվեց Հայաստանում զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության իրականացման Մտադրությունների հուշագիր՝ ազդարարելով ՀՀ սահմանային անցման կետերում 1 տարի տևողությամբ վիճակագրական լայնածավալ հետազոտության մեկնարկը:

ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀՀ-ԵՄ հետ ԽՀԱԱԳ ստեղծման բանակցային գործընթացի շրջանակներում ներառվել է ՀՀ գործող օրենսդրության մոտարկումը ԵՄ օրենսդրությանը: Գործողության մեջ են մտել «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» և «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքները: Մշակվել և ընդունվել են օրենքների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը, սահմանվել են հավատարմագրման, ստանդարտացման և չափագիտության ազգային մարմինները:

Կայացել են մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների դեմ պայքարն ուժեղացնելու և դրա իրականացումը համակարգելու նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ-ԵՄ ԽՀԱԱԳ ստեղծման շուրջ բանակցությունների արդյունքները: Հանձնաժողովի իրականացրած աշխատանքների արդյունքում մշակվել են Հայաստանում դատական համակարգի գործառնության բարելավմանը, կեղծ ու խարդախված ապրանքների հայտնաբերման և բացահայտման, ինչպես նաև կեղծարարության և հենության համար սահմանվող համարժեք պատժամիջոցների կիրառման թափանցիկ ու արդյունավետ ընթացակարգեր:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Գործակալության իրականացրած աշխատանքները ըստ գործունեության ուղղությունների.

Գյուտեր և օգտակար մոդելներ. Ստացվել է 179 հայտ, որից 138-ը գյուտի և 41-ը օգտակար մոդելի:

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ. Ազգային ընթացակարգով ստացվել է ապրանքային նշանների գրանցման 1740 հայտ, որից 72-ը մերժվել են: Միջազգային ընթացակարգով՝ 3170 ծանուցում, որից 505-ը մերժվել է: Ազգային ընթացակարգով ստացվել է արդյունաբերական նմուշի գրանցման 56 հայտ, որից 23-ը գրանցվել է: Միջազգային ընթացակարգով ստացվել է 88 ծանուցում, որից մերժվել են 2-ը:

Պետական գրանցամատյանների վարում. Պատրաստվել և համապատասխան գրառումներով իրավատերերին է հանձնվել 1290 ապրանքային նշանների և 19 արդյունաբերական նմուշների վկայագիր, 113 գյուտի և 32 օգտակար մոդելի արտոնագիր, հրապարակման է հանձնվել 217 ապրանքային նշաններին վերաբերող փոփոխություններ: Պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 3 հանրահայտ ճանաչված ապրանքային նշանի վկայագիր: Կայացվել է 129 պայմանագրի գրանցման մասին որոշում, 129 գրառումներ է կատարվել ապրանքային նշանների գրանցամատյանում: Իրականացվել է 101 ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգում: Տարբեր դատարաններում 277 նիստերում քննարկվել է 50 դատական գործ:

Հեղինակային իրավունքի և միջազգային համագործակցություն. «Մտավոր սեփականության իրավունքի համակարգի հզորացում» Թվինինգ ծրագրի շրջանակներում իրականացվել են ուսուցողական այցեր Հունաստան և Դանիա: Շարունակվել է համագործակցությունը միջազգային, տարածաշրջանային և օտարերկրյա ՄՍ կազմակերպությունների հետ: Պատրաստվել է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Իրականացվում են «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մագնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատանքները:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ և ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Տրվել է 7 առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա, դադարեցվել՝ 8 առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիայի գործողությունը: Տրվել է 1 թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման լիցենզիա, դադարեցվել է 3 թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման լիցենզիայի գործողությունը: Տրվել է 13 «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծման

լիցենզիա:

ՀՀ անմշակ ալմաստի ներմուծման ժամանակ հաշվառվել են Քիմբերլի գործընթացի հավաստագրեր՝ թվով 149 հատ, անմշակ ալմաստի ընդհանուր քաշը՝ 121.102.54 կարատ, արժեքը 40.662.999.07 ԱՄՆ դոլար: Արտահանման ժամանակ տրամադրվել է Քիմբերլի գործընթացի 58 հավաստագիր, անմշակ ալմաստի ընդհանուր քաշը՝ 52.778.36 կարատ, արժեքը 8.876.815.25 ԱՄՆդոլար:

Որակավորվել են 6 հյուրանոցային տնտեսության օբյեկտ, դադարեցվել է 2 որակավորման վկայականի գործողություն (ժամկետի ավարտմամբ և դիմումի հիման վրա):

ՀՀ-ից երկակի նշանակության ապրանքներ արտահանելիս տրամադրվել է 1 անհատական և 4 ընդհանուր թույլտվություն:

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Տեսչության կողմից իրականացվել են տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների նկատմամբ պետական վերահսկողություն և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական չափագիտական վերահսկողություն, առաջնային նշանակություն է տրվել լայն սպառման ապրանքներին, որոնք իրենց մեջ պարունակել են ռիսկային էլեմենտներ: Վերահսկողություն է իրականացվել նաև արտադրատեսակների արտադրման, իրացման և ծառայությունների մատուցման փուլերում:

Պետական վերահսկողություն է իրականացվել 282 տնտեսավարող սուբյեկտներում: 207 սուբյեկտներում հայտնաբերվել են խախտումներ և պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 53 120 000 դրամի չափով: